

Թ Ի Ի 4

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1914-15 ՇՐՋԱՆԻ
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Դ .

9 Յունիս 1914



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՀԱՆՆ
Կ. ՊՈԼԻՍ, Պապը-Ալի Ճառտէսի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

1. Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեան
2. Տ. Վահրամ Կ. Մանկունի
3. Տ. Զարմայր քհնյ. Կէղիւրեան
- 4.

(Բ. Վ. ինակ)

5. Տ. Մաղաքիա Արքեպ. Օրմանեան
6. Տ. Գրիգորի Ծ. Վ. Պալազեան
7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բերտաճեան
8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գազարեան

(Գ. Վ. ինակ)

9. Տ. Շմայեակ Արքեպ. Դիմաքսեան
10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
11. Անանիա Վ. Հազարապետեան
12. Տ. Միքայէլ քհնյ. Աշեան

(Դ. Վ. ինակ)

13. Տ. Արիստակէս Ա. Զինյ. Զիզմէնեան
14. Տ. Խորէն Գ. Յարութեան
15. Տ. Յուսիկ Գ. Բազումի
16. Տ. Տաճատ Գ. Փայայեան

(Ե. Վ. ինակ)

17. Տ. Եղնիկ Ծ. Վ. Պապեան
18. Տ. Շմայեակ Զաք. Երեսէնեան
19. Տ. Բարձր Գ. Թազըմեան
20. Տ. Արէլ Գ. Երէջեան

ԱՇԽԱՏԱՆԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

Էյուպ Ս. Եղիա

21. Օննիկ էֆ. Մինասեան

Խասգիւղ

22. Պետրոս Էֆ. Նալբանդեան
23. Պետրոս Գ. Խորասանեան
- 24.

Մագրիգիւղ

25. Երուանդ Էֆ. Նալբանդեան
26. Թազըմ Գ. Արեւեան
27. Տօքմ. Գ. Մալխասեան
28. Յակոբ Գ. Պոյաճեան
29. Յովհաննէս Գ. Իսապուրեան
30. Սարգիս Գ. Պէմբէկեան
- 31.

Պէտլիքաթէ

32. Արշակ Էֆ. Նալբանդեան
33. Զովսէփ Գ. Գազարեան

Սան-Սթեփանո

34. Գեղի էֆ. Նալբանդեան

Վրթագիւղ

35. Խնկէ Էֆ. Նալբանդեան
36. Տ. Գ. Ստեփան Էֆ. Նալբանդեան

(Բ. Վ. ինակ)

Բերա-Գասր Էֆ. Նալբանդեան

37. Աստուածատու Էֆ. Նալբանդեան
38. Արամ Գ. Նալբանդեան
39. Արմենակ Գ. Բալսեղեան
40. Գեորգ Գ. Թորգմանեան
41. Գրիգոր Գ. Շահաբեան
42. Յովհաննէս Գ. Չոլիկեան
43. Սարգիս Գ. Մինասեան
44. Տ. Վ. Գ. Թորգմանեան
45. Յովսէփ Գ. Գաբրիելեան

Գաբրիել-Գաբրիել

- 46.

Գուրուգէշմէ

- 47.

Պէշիկմաշ

48. Տրդատ Պ. Տառնեան

Ֆէրիգիւղ

49. Եղուարդ Էֆ. Նալբանդեան
50. Հրանտ Գ. Ասատուր
51. Մարկոս Գ. Նաճարեան
52. Յակոբ Գ. Պապի

(Գ. Վ. ինակ)

Գատրգիւղ

53. Անտոն Էֆ. Նալբանդեան
54. Աղասի Գ. Նալբանդեան
55. Եղուարդ Գ. Շիրինեան
56. Ներսէս Գ. Օհանեան
57. Մկրտիչ Գ. Արքայեան
58. Պենէ Գ. Թորգմանեան
59. Սարգիս Գ. Խոսրովեան

Եֆնի-Գարու

60. Պենէ Էֆ. Նալբանդեան
61. Վահան Գ. Փափազեան

Պալամ

62. Տօքմ. Կարսապետ Էֆ. Նալբանդեան
63. Յարութեան Էֆ. Մոստիսեան
64. Սարգիս Գ. Սրենց
65. Հրանտ Գ. Անդրէասեան

Սկիւտար Եֆ. Նալբանդեան

66. Թորգմ Էֆ. Նալբանդեան
67. Հմայեակ Գ. Խոսրովեան
68. Վահան Գ. Սուրբեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1914—1915 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ Գ.

6 ՅՈՒՆԻՍ 1914

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՀԱՅԿ ԷՖԵՆՏԻ ԽՕՃԱՍՍՐԵԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Կանոնագիր Ազգ. սրոց եւ տեղեկագիր Համադպարութեան եւ Նախաձեռնութեան Դիւաններու: (Շարունակութիւն վերաբերեալ):

(Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ խորհրդարանը ի ներկայութեան 53 երեսփոխաններու որոց թիւը յանգեցաւ յետոյ 81ի):

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԱՏԵՆ. Էֆ. — Ատենայեան Գաբրիէլ էֆ. Նորատունկեան՝ զրով մը տկարութեան պատճառաւ այսօրուան նիստէն բացակայութիւնը հաղորդած է: Տ. Արէլ քահանայ, Գեորգ էֆ. Թորգմանեան եւ Ս. Սուրբ Էֆ. ալ այսօրուան նիստէն իրենց բացակայութիւնը հաղորդած են զրով: Կարձանագրենք զիրենք օրինաւոր բացակայ:

ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐԻ ԲՈՂՈՒՐ

ԱՏԵՆ. Էֆ. — Պատրիարքի Հայ գիւղի քարահանքի խնդրոյն նկատմամբ բողոք մը կայ: Այս խնդիրը կը վերաբերի վարչութեան, հետեւաբար այս հեռագիրը կը յանձնենք վարչութեան նկատմամբ:

ՉԱՅՆԵՐ. — Անգամ մը կարդացուի եթէ կարելի է:

(Ատենայեան Էֆ. կարդաց հետեւեալ հեռագիրը):

«Հազար նեղութեամբ եւ մեր աշխատութեան արդիւնքով գնուած հողերու մէջ գտնուած կրանիթի հանքերը, առաջնորդին անուան. արձանագրուած ըլլալէն օգտուելով, Պոլսեցի քանի մը հարուստ անձեր մեր գիւղի ժողովրդեան իրական շահուց եւ փափաքին հակառակ այդ հանքերը վարձելու եւ իրենց մանաշնորհ ընելու. ձեռնարկած են:

«Յիշեալ առաջնորդի զիմուծին վրայ, տեղական կառավարութիւնը գիւղացիները այդ քարահանքէն կը դարձնէ ու կարգիլէ քարերու փոխադրութիւնը եւ շինութիւնը: Առաջնորդը կը փափաքի որ մեր ստացուածքով տնտեսական գերութեան մէջ մնանք: Իր այս ընթացքին գէտ կը բողոքենք մեր բոլոր ոյժով: Կը հաւատանք թէ չէք փափաքիր որ մեր աշխատութեան արդիւնքը վայելեն կարգ մը շահադէտներ եւ գործաւորները գրկուին ու փնտուրն անկէ, հետեւաբար կը խնդրենք որ ըստ առաջնորդի ազատ թողութեան մեր աշխատութեան մէջ:»

Թաղ. Խորհրդոյ Ատենայեալ

Դ. Մարգարեան

Մխար Մանուկ Դաւիթեան

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ժողովականներէն Յ. Շահրիկեան էֆ. հետեւեալ հրաժարագիրը խրկած է.

(Ատենայեալ էֆ. կ'որդաց հետեւեալ գիրը.)

Ազգ. Երեսփոխանական Ժողովի
Մայր Դիւանին

Վաղուց է որ մտադրել էի հրաժարուել Ազգ. Երեսփոխանական Ժողովի իմ երեսփոխանութիւնից: Վերջին երկու երեք ամիսներուս ես համբերութիւն ունեցայ սպասելու միմիայն Խորհրդարանական Քննիչ Յանձնաժողովի առաջ եւ նրա բերիք եզրակացութեանց տրիթով ազգա-

յին ժողովի մէջ իմ պարտականութիւնս կատարելու համար: Բայս ամիսներէ ի վեր արդէն երեսփոխանը ընդնշմարել են տալիս թէ այդ հարցն էլ կամ այդ Յանձնախմբի գոյութիւնն եւ աշխատանքն էլ ինչպէս համանման շատեր, ո՛ւր պիտի յանգին, ուստի եւ տեղի չը կայ սպասելու:

Մտադրել էի հրաժարուիլ ո՛չ միայն ընդհանուր խոստովանութեամբ յայտնի այն պատճառով որ երեսփոխանութեան մէջ երեսփոխանների անհատաբար եւ հաւաքաբար նախապաշարատ հոգածութեամբ արեւելից աշխատութիւնը, սկզբունքներէ եւ ուղղութիւններէ սխալմամբ հետեւողականութիւնը բացակայում է, այլ եւ նրա համար որ իմ կողմից էլ իմ համոզումների գէտ մի հակասութիւն է բաղդի մի քանի անգամ օգտուողի վիճակին մէջ մնալ:

Բազմը ինձ չէ դրել վիճակով դադարողների շարքին մէջ, իսկ Սահմանադրութեան հաստատութենից աւելի քան կէս դար յետոյ էլ Երեսփոխանական Ժողովի շրջանը տաս տարի պահպանելը պիտի նշանակի մեր մէջ ո՛չ մի էլօլիսիոն գոյացած չը լինել:

Բացի այդ, ցարդ մեր մէջ տեղի ունեցած ընտրութիւնները կատարուել են համարեա նշանակովի կերպով, մի միայն անձնաւորութիւնների անուան չուրջ առանց ընտրողների եւ ընտրուողի միջեւ ուղղութեան համաձայնութիւնների յանձնառութիւններ լինելու: Եթէ այսպէս չը լինէր, մեր Ազգային Գերագոյն Ժողովը այսօր բոլորովին տարբեր պայմանների մէջ պիտի լինէր:

Արդ, ցանկանալով որ իմ Սահմանադրական ըմբռնումները խօսքից գործի անցնելով, իմ անձի վրայ կիրարկուել նախաձեռնեմ, մատուցանում եմ իմ հրաժարականը երեսփոխանութիւնից վերջնապէս,

եւ խնդրում եմ Պատկառելի Ժողովից ընդունել:

Խնդրում եմ նաեւ ընդունիլ իմ խորին մեծարանացը հաւատարմքը:

6 Յունիս 1914

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շահրիկեան էֆ. հրաժարականը ցաւ կը պատճառէ մեզի, ինք լաւագոյն կերպով աշխատողներէն մէկն է եւ ժողովի գործունէութեան տեսակետով իբրեւ երեսփոխան իր ներկայութիւնը կարեւոր է, հետեւաբար յարմար կը նկատեմ որ իր հրաժարականը մերժուի այս ժողովէն:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԵԱՆ. — Կարծեմ թէ Շահրիկեան էֆ. հրաժարականը սկզբունքների խնդրէ մը յառաջ կուգայ: Երեսփոխանական շրջանի տեւողութիւնը 10 փոխանական շրջանի տեւողութիւնը 10 տարի է՝ երկու տարին անգամ մը նորոգուելու պայմանով: Շահրիկեան էֆ. 5րդ վիճակով դադարելի երեսփոխանաց մէջ վիճակով համար՝ աշտան երկար առաջնութեան համար՝ պաշտօնավարելու, լուսն փոխանակ պաշտօնավարելու, լուսնագոյն կը սեպէ որ իր սկզբունքները պարզելով գայ Ազգ. Ժողովին՝ զինքը ընտրողներու քուէով եւ կուգէ որ ուրիշներ ալ այդպէս ընեն: Այս առարկութեամբ արուած հրաժարական մը բոլորովին տարբեր է պարզ հրաժարականէ մը:

ՆԵՐՍԷՍ ԷՖ. ՕՀԱՆԵԱՆ. — Շահրիկեան էֆ. իրեն յատուկ պատճառաբանութիւններով հրաժարական կուտայ, բայց պէտք է գիտել որ իբրեւ այս ժողովէն ընտրուած Խորհրդարանական յանձնաժողովի անդամ, չենք կրնար նկատուողութեան դովի անդամ, չենք կրնար նկատուողութեան անդամ իր հրաժարականը: Քանի որ նախորդ վարչութեան բարենորոգման խնդրոյն մէջ հետեւած ուղղութիւնը քննելէ յետոյ, մեր տեղեկագիրը ներկայացնելու առթիւ այստեղ իր ներկայութեան պէտք կայ:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԵԱՆ. — Սակայն Շահրիկեան էֆ. սկզբունքի խնդրը մը կը

յուզէ, պէտք է այս ժողովը այս կէտը նկատողութեան առնէ:

ՉԱՅՆԵՐ. — Ատիկա Սահմանադրութեան վերաբնութեան վերաբերեալ խորհրդէ:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն Շահրիկեան էֆ. հրաժարականը ձեր քուէին կենթարկեմ:

(Ատենայեալ էֆ. քուէի գնելով Շահրիկեան էֆ. հրաժարականը քուէից մեծամասնութեամբ մերժուեցաւ)

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ԱԶԻ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆ. ԷՖ. — Ազգ. Վարչութեան պաշտօնագիր մը կայ, Սահմանադրութեան մէկ արամագրութեան մասին:

(Ատենայեալ էֆ. կարդաց նոյն գիրը որ հրաժարական է ներկայ նստաշրջանի Ա. Նիստի առեկադրութեան մէջ):

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԷՖ. ԳԱՍՊԱՐԵԱՆ. — Այս գիրը պէտք է նախաձեռնութեան գիւնդին զրկուած ըլլար:

ԱՏԵՆ. ԷՖ. — Այդպիսի առաջարկութիւն մը եղեր է, բայց ժողովը որոշում չէ տուել: Վարչութիւնը իր իրաւունքին մէջ է, օրինական խնդրոյ մը համար այս ժողովին մեկնութեան գիւնդով կրնաք եթէ կուգէք, նախաքննութեան յանձնել:

Ա. ՎՈՒՄԵԱՆ ԷՖ. — Օրէնդիրը բացօթե կերպով նշանակել է ըսելով որ, «եթէ գաղափարն առիկ չէ», ու եւ մէկը կրնայ ամբաստանութեան ներքեւ գտնուիլ նոյն իսկ ազգային մարմնոյ մը կողմէ, բայց այս ամբաստանութիւնը գաղափարութիւն չնշանակելու իսկ գալով հիկեցակ աններու՝ անոնց համար որոշ կերպով ամբաստանութեան բարձր գործածեք է ներկայ պարագային մէջ, եթէ հարցում եւ զամ խնդրոյն մէջ գաղափարութիւն չկայ, ու եւ մէկուն ընտրութիւնը չկը:

քեր ամէն շարժում զանազան ձևերով կը կրկնուին ժողովրդեան մէջ, հետեւապէս հանրութեան վստահութիւնը աւելցնելու համար թէ՛ Վարչութեան եւ թէ՛ Ա. Նախագահին կորովի միջոցներուն պէտք կայ ճամբունին որպէս զի, զեղծարար պաշտօնեաներէն 20—25 տարինս ի վեր խղճամիտ կերպով աշխատող պաշտօնէից պատիւն ալ չարատաւորուին. պէտք է մենք, այդ կարգի պաշտօնեաները պատուաւոր կերպով ապրեցնենք, հետեւաբար, միանգամ ընդ միշտ քննութիւն կատարելով՝ հարկ է որ դուրս նետենք գողերը: Կառավարկուի որ 1908էն առջի տուրքերը ջնջւին, որովհետեւ չեն տար եղեր, այս «չեն տարը» երկու բառ է որ մենք կ'ըսենք ու կ'անցնինք, սակայն, անոնք որոնց համար չեն տար կ'ըսենք կը պատասխանեն թէ դիմած չին որ տամ. այսպիսի դատակարգ մ'ալ կայ ազգին մէջ, որոնց եթէ դիմում ըլլայ, պատրաստ են իրենց պարտքը հատուցանելու: Առայդ է որ մինչեւ իսկ ծերակուտականներ ունինք որ պարտքերն չեն տուած, բայց կարելի չէ ազգին ամէն անհատները մէկ ջուրով լուար: Հետեւաբար նախ մենք, պէտք է մեր պարտքը կատարենք, Պատրիարքարանի հանդէպ ժողովրդեան վստահութիւնը աւելցնելով: Եւ տուրքի գանձման ձեւը կ'անոնաւորելով: Ուստի կ'առաջարկեմ հետեւեալ բարեփոփոխութիւնը ընել այն յօդուածին վրայ: «Երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու իրաւունք ստանալու համար, ամէն ազգային պարտաւոր են 1908էն սկսեալ իրենց ազգային տուրքը վճարած ըլլալ, իսկ 108էն առաջ գոյացած ազգային տուրք պարտքը եթէ միանուագ վճարելու ի վիճակի չեն, պէտք է 0/0 20 վճարմամբ տարուէ տարի հաշուակցել:»

Ե. Է. ՇԻՐԻՆՆԻՆ. — Վարչութեան բերած հաշիւները եւ իրականութեան վերայ հիմնուած չեմ կրնար նկատել: Իրաւ է մօտ քի գլխուն մէջ ցոյց տրուած է թէ որչափ անձեր վճարում րրած են, բայց

այդպէս չէ իրողութեան մէջ: Մենք կը տեսնենք որ 20,000 հոգի տուրքէ պարտք ունեցող նշանակուած են հոն, սակայն այս բոլորովին սխալ է, վասն զի եթէ ասոնցմէ չնչնք մեռեալներու ու երկրէն հեռացողներու եւ անհետացողներ ու ստուար թիւը, այն ժամանակ պիտի ճշդենք թէ պարտականներու գումարը մինչեւ իսկ 2000 ուկին չանցնիր: Պատրիարքարանի մէջ կանոնաւոր վիճակագրութիւն մը չկայ որ այս թիւերը որոշապէս հասկցուն ու ստուգուի թէ որչափ հոգի նոյն տարւոյ տուրքը եւ որչափ հոգի ալ յետեւալ տարին երուր վճարած են: Առանց մանրազնին քննութեան եւ պարզապէս կ'ըսելի գումար մը ցուցնելու համար 20 միլիոն դուրուշի պահանջ մը կը ցուցուի Վարչութեան յայտարարութեան մէջ. գիտէք Տեառք ինչ կերպով յառաջ եկած է այս պահանջի հսկայ գումարը, պարզապէս փոխադրութեամբ՝ նախորդ տարին երուր մէջ ազգային տուրք վճարած ազգայիններու թիւը հիմ ընդելով՝ օրինակի համար 1900 տարւոյ համար ազգային տուրքի հասցի ինչ նախատեսութիւնը եղած է 176,000 զրշ. այս գումարէն զեղչուած է նոյն տարւոյ մէջ այս գլխին իրականացած մօտաւոր եւ միացորդին վրայ բարդուելով հետեւեալ տարւոյ նախատեսութեան գումարը՝ ամբողջը միասին հետեւեալ տարւոյ անցած է եւ այսպէսով տարուէ տարի փոխանցուելով հասած յանգած է 20 միլիոնի վիթխարի գումարին. այս կերպով ալ կը շարունակուի մինչեւ հիմայ հակառակ րրած բողոքներու եւ նախորդ Վարչութեան մօտ կատարած յետազննմանց: 1911ին 136,000 զրշ. գոյացեր է, բայց այս գումարը քանի հոգի վճարեր են եւ որ տարին երուր համար կը պատասխանեն 4760 հոգի միայն մինչդեռ 1900ին 4000 հոգի վճարեր են: Չմոռնամ ըսելու որ եթէ այդ 4760 հոգին նոյն տարւոյ տուրքն է որ վճարած է, ասոնք այն անձերն են որ ամէն տարի իրենց տուրքի պարտքը կը վճարեն միշտ կանոնաւորապէս, իսկ այն մարդը որ եր-

բէք վճարած չէ, երբէք ալ վճարելիք չունի եթէ ստիպողական պարտքաներու մէջ չգտնուի, ուստի ատմարակալութեան օրինակ երեւոյթական հերցուած մը կ'ըլլայ, ամէն տարի այսպիսի մեծամեծ գումարներ փոխանցել: Այս գումարին պարզապէս չփոթութիւն յառաջ բերելէ ուրիշ նպատակ չկրնար ունենալ: Ահա ասոր համար ալ է որ այն համոզումը ունիմ թէ Սահմանադրութեան վերահաստատումն առջի տարին երուր հաշիւները փակուին եւ անկէ վերջի տուրքերը պահանջուին: Ասիկա աւելի նպատակայարմար մանաւանդ ճիշտ գործ մը եղած կ'ըլլայ: Ուստի կ'առաջարկեմ երեւակայական հաշիւներով զրազելու փոխարէն՝ ընդունիլ յօդուածը առաջարկուած ձևով:

Կ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ Է. Ֆ. — Անցեալ նիստին կատարուած վիճարանութիւնը որ այսօր կը շարունակուի, կատարած ներշնչած էր մեզի, թէ կարգ մը անձերու համար քաջալերական պիտի ըլլայ իրենց տուրքը չվճարելու: Մեր այդ կատարած արդարացաւ, որովհետեւ զեռ անցեալ շաբթու, մէկը որ իր պարտքերը վճարելու խոստում տուած էր իր նշանախօսութեան առթիւ, ուզեց 5 տարեկան տուրք վճարելով հաշիւը փակել: Անկէ զատ երբ մեր հաւաքիչը կը ներկայանայ, այն տեսակ անհարկութիւններ կ'ըլլան, որոնք ցոյց կուտան թէ մեր այս վիճարանութիւնները, դուրսը տարրի կերպով արձագանգ կը գտնեն: Չեզի ապահովելու համար թէ այս հաշիւները ճիշտ չեն, միայն սաշափը կըրնամ ըսել թէ՛ միայն 1200 ոսկի ընկալազիր կարուած է եւ ամէնքն ալ խոստացած են իրենց պարտքը վճարել, իսկ եթէ հին տուրքերու ջնջման կողմը երթանք, նոյն տարւոյ տուրքը 6—700 ոսկի միայն կրնայ ըլլալ, վիճակ մը որ այժմէն ձեզ ներկայացնել պէտք կը տեսնուի, որպէս զի սխալի վրայ չը հիմնենք մեր հաշիւը:

Ս. Է. Ֆ. ԷՍՄԵՐԵԱՆ. — Երբ Ազգ. Ժողովը որոշէ յետեւալ տուրքերու ջնջումը, ես այլ եւս ազգային տուրք չպիտի տամ,

խորհելով որ տուրքի այս ջնջումէն օգուտ ունենալ իրենց պարտքը չվճարողներն են, իսկ տուրքները պարտավճարները, օրինապահները եւ ատենին դրամ վճարողները. ասանկ անքնական բան կ'ըլլա՞յ: Ես անցեալ նիստին ալ ըսի դարձեալ կը կրկնեմ որ, Պատրիարքարանը այն պահանջները միայն պիտի գանձէ՝ որոց վճարման դիւրութիւն կայ, այսինքն անոնց գումարները, որոնք հոն կը դրմեն, ամօսնական, ժառանգական խնդիրներու համար եւլն: Հետեւաբար այս կերպով տուրք գանձելը ամենէն դիւրին եղանակն է, ուստի այլեւս խնդիրը երկարու ոչ պէտք կայ եւ ոչ հնարաւորութիւն:

ԱՏԵՆ. Է. Ֆ. — Դեռ ուրիշ երեսփոխաններ ալ կան որոնք խօսք ուզած են, եթէ չէ՞ք ուզեր վիճարանութեան շարունակութիւնը, ջնջենք այդ յօդուածը:

ՉԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

Լ. Է. Ֆ. ՍԱՍԹՆԵԱՆ. — Կ'առաջարկեմ որ բաշխման ցուցակը մէկ ամիս ի տես դրուի:

ԱՏԵՆ. Է. Ֆ. — Արդ տանք ուրեմն Դրդ յօդուածը:

ՅՈՒ. 7. Իւրաքանչիւր ազգային անհատ կ'արձանագրուի այն թաղին տուրք ցուցակին մէջ ուր որ կը բնակի ձմեռը:

ՉԱՅՆԵՐ. — Շատ լաւ:

ԱՏԵՆ. Է. Ֆ. — Դրդ յօդուածին վրայ եթէ դիտողութիւն չունիք, այս յօդուածն ալ վաւերացուած նկատելով կ'անցնինք յաջորդ յօդուածներուն:

ՅՈՒ. 8. — Կեդր. տուրք բաշխման ցուցակները, երկու տարին անգամ մը վերաքննելի են, եւ այս վերաքննութիւնը կը կատարուի 6րդ յօդուածի տրամադրութեանց համաձայն: Ըստ այնմ, տուրք վճարողներու ցանկէն կը ջնջուին այդ երկու տարին երուր ընթացքին մեռնողները, թաղէն հեռացողները, վատապէ կամ եկամուտէ զրկուածները, եւ կ'աւելցուն բոլոր անոնք որ 21 տարին նոր թեւակոխած են

և Յոգ 1րդի համաձայն պարտաւոր են տուրք վճարել, ինչպէս նաեւ բոլոր անոնք որ ետքէն եկած ու թաղին մէջ հաստատուած են :

Յոգ. 9. Կեդր. տրոց հաւաքումը Պատրիարքարանի կողմէ կարգեալ յատուկ հաւաքիչներու ձեռքը կը կատարուի իւրաքանչիւր թաղի մէջ :

Յոգ. 10. Ներկայ կանոնագրին համաձայն, ազգային տուրքի գանձման եւ բաշխման մանրամասնութիւնները կը ճշդունին Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղ. Ժողովին կողմէ պատրաստելի հրահանգով մը :

Յոգ. 11. Գաւառներու կողմէ Պոլսոյ Կեդրոնական Սնտուկին վճարուած տուրքը պիտի շարունակուի ըստ առաջնոյն, մինչեւ որ Ազգ. Ժողովը, համաձայն Ազգ. Սահմանադրութեան Ծրագրի յօդուածին, այդ մասին հարկ եղածը որոշէ :

Յոգ. 12. Կեդր. Վարչութիւնը ամէն եւթամսական տարեկան, մանրամասնօրէն արգարացնելու պայմանաւ, արտօնեալ է ընդհանուր տրոց համադրութեան առ առաւել ընդ 20 0/0 ծախք սահմանել հաւաքման եւ բաշխման գործողութեանց :

Յոգ. 13. Այս օրէնքին գործադրութիւնը յանձնուած է Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովին :

ՏՕՔԹ. ԴԱԻԻԹԵԱՆ ԷՖ. — Տրոց բաշխման ցուցակները պէտք է չորս տարիէն վերաքննելի ըլլան որովհետեւ 2-3 տարին բաւական միջոց մը չէ այս ցուցակներու պատրաստութեան համար որ բաւական աշխատութիւն կը պահանջէ :

Ե. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ. — Չորս տարի կըրնայ ըլլալ, բայց, այդ միջոցին մէջ՝ արդէն ելեւմտից դիւանին եւ Վարչութեան կողմէ պէտք եղած սրբազրութիւնները պէտք է ըլլան :

Հ. ՊՅԱՆՆԵԱՆ ԷՖ. — Ընդհանուր վիճակագրութիւն մը կարեւոր է, որպէս զի

մեծնողներն ալ ճշդունին, եւ հարկ եղած սրբազրութիւններն ըլլան :

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն ժողովը այդ կերպով կ'ընդունի փոփոխութիւնը :

ՏՕՔԹ. ԴԱԻԻԹԵԱՆ ԷՖ. — Տրոց հաւաքման համար հաւաքիչներու յատկացուելիք գումարը պիւտճէի խնդիր է. Վարչութեան կողմէ այդ խնդիրը կրնայ կարգադրուիլ :

Ա. ԱԼՊՅԱՆՆԵԱՆ ԷՖ. — Տուրքի հաւաքման համար, դանձուած տուրքին վերայէն 0/10 20 սահմանուիլը սխալ մընէ, կ'առաջարկեմ իբրեւ պիւտճէի յարակից եւ վարչական տնօրինութեան ենթակայ խնդիր ջնջել այդ կէտը : Պիտի առաջարկեմ նոյնպէս որ մուգաթայի մասին ալ առանձին տրամադրութիւն մը դրուի, որովհետեւ առանց անոր թերի պիտի ըլլայ կանոնադրը. պէտք է հաշտեցնել այդ կէտը Սահմանադրութեան տրամադրութեան հետ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Ատենապետաց դիւանին կողմէ բացատրութիւն մը տալու հարկին մէջ կը գտնուի, երբ տուրքի համար ընդհանուր կանոնադիր մը ունենանք, այն առին, այդ կէտերը որոշապէս կը նշանակենք, Ազգ. Սահմանադրութեան մէջ, պետական հաւանութիւնն ալ ստանալու մասին տրամադրութիւններ կան, յայնպէս որ ժողովին իրաւասութիւնը, որոշ չափով մը սահմանափակուած է, այս է պատճառը որ չուզէինք ատենց մանրամասնութեանց մէջ մտնել եւ այդ կէտերը ընդլայնել :

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Եթէ Սահմանադրութիւնը կէտ առ կէտ գործադրել պէտք ըլլայ, բացառիկ նիստերու համար ալ կառավարութեան թոյլտուութիւնը ստանալու պէտք կայ՝ մենք գիտենք որ, եթէ կառավարական վաւերացման երթարկի տուրքերու բաշխման խնդիրը՝ չպիտի ընդգիծանան, հետեւաբար փոխանակ վաւերացման ենթարկելու եւ յետոյ գործ

ծադրելու անմիջապէս գործադրելուն մէջ ու եւ է անտեղութիւն չենք տեսներ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Այդ ժողովոյ գումարման ակնարկութիւն մը մ'եղաւ, պէտք կ'զգամ բացատրութիւն մը տալու չին ատեն երկու ամիս տեւականօրէն նիստ կը գումարուէր, եւ որովհետեւ յայտնի դէպքերու թիւներ կան այս մասին, այդ գումարումը բաժնուեցաւ տարւոյն ընթացքին մէջ : Սակայն, պէտք է ուշադրութիւն ընել որ մեզ արուած իրաւունքին մէջ չարժինք, հետեւաբար պէտք է զրկենք Վարչութեան, որպէս զի նոր բաշխում մը ընէ, եւ այդ կերպով գանձում կատարուի. ուստի, ներկայ կանոնադիրը պիտի յղենք Վարչութեան որպէս զի անոր կողմէ գանձման եւ բաշխման մանրամասնութիւնները ճշդունին եւ գործադրութեան դրուին :

ՍՄԲԱՏ ԷՖ. ԲԻԻՐԱՏ. — Ստիպութիւն արուելով :

ԱՏԵՆ. ԷՖ. — Այո ստիպութեան որոշմամբ :

ԱՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ ԷՖ. — Ըստ 65րդ յօդուածի Ազգ. Սահմանադրութեան 75 դրոշմ տուրքը պարտաւորիչ է, այս կէտը ինչպէս կը հաշտուի մեր վաւերացուած կանոնադրին հետ :

ԱՏԵՆ. ԷՖ. — Որովհետեւ Սահմանադրութեան այդ յօդուածը, ամբողջապէս ազգին վճարած տուրքին կը վերաբերի հետեւաբար անհատի մը ազգին իր թաղին տուածն ալ ի միասին հաշուելով 75 դրոշմ կը լրանայ, չիմայ, կանոնադիրը ամբողջապէս քուէարկուած ըլլալով, եւ պէտք չի տեսներ որ երկրորդ անգամ ալ վիճի տեսներ կանոնադրութեան ենթարկելու զայն, սակայն եթէ կո գէթ, կատարուած սրբազրութիւններով անգամ մ'ալ կրնանք կարգալ :

(Ատենադիր ԷՖ. կարդաց վաւերացուած կանոնադիրը) :

Ս. ԷՖ. ԷՍՄԻՐԵԱՆ. — Օրէնքին այս կերպով քուէարկութենէն կը կարծեմ թէ թաղային նոր կռիւներու դուռ պիտի բացուի. որովհետեւ Յոգ յօդուածէն այնպէս կը հասկցուի որ, մինչեւ որ ու եւ է անհատ տուրքի իր բոլոր պարտքերը չը վճարէ ընտրութեան չկրնար մասնակցիլ, այս կէտը զանազան մեկնութեանց առիթ պիտի ըլլայ եւ չիթթութեանց դուռ պիտի բացուի, կարծեմ լաւ կ'ըլլայ որ ճշգրտի այս կէտը :

ՊԱՐԳԵԻ ԷՖ. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ժիշտ նոյն բանը պիտի ըսէի եւ ալ, օրէնքի մը մէջ պէտք չէ որ անորոշութիւններ դրուեն, եւ մենք այդ ձեւով օրէնք քուէարկելով աւելի զփառութեանց պատճառ կ'ըլլանք, հետեւաբար պիտի առաջարկեմ որ ըսուի, մինչեւ ամենավերջին տարին է, իրենց տուրքը վճարող կամ վերջին ընկալադիրը ներկայացնող :

ՀՐԱՆՏ ԷՖ. ԱՍՍՏՈՒՐ. — Ստիպալ ամենակարեւոր պարագայ մ'է, եթէ իբրեւ սկզբունք ընդունինք որ միայն իրենց տուրքը վճարողները պիտի մասնակցին քուէարկութեան, կը կարծեմ որ ամեն քուէարկութեան օր շատ քիչ մարդիկ պիտի ունենանք մասնակցող եւ 10—15 քուէ ու երեսփոխան պիտի ընտրենք, բան մը որ ոչ միայն փափաքելի չէ, այլ ընտրութեան ոգին ալ շատ չպատշաճի, հետեւաբար օգին ալ շատ չպատշաճի, միեւնոյն ատեն կը փափաքեմ որ տուրքի գանձումը օրինաւոր ձեւ մը առնէ, որովհետեւ եղած առարկութիւններէն հասկցուեցաւ որ գանձումներն ալ կանոնաւոր կերպով տեղի չեն ունեցած, ինչ որ անհրաժեշտ եւ լրանալի պայման մ'է, հետեւաբար կ'առաջարկեմ որ նոյն տարւան տուրքի ընկալադիրը ներկայացնելու պայման մը դրուի :

ԱՏԵՆ. ԷՖ. — Քուէարկութեան մասնակցելու համար այդ պայմանը դրուած էր, որովհետեւ ճիշտ յօդուածով յետեւալ տուրք

քերու ջնջման մասին տրամադրութիւն մը կար: Արդարեւ եթէ մինչեւ 1908 տուրքերը ջնջուած ըլլային, անկից ասդին մէկ քանի տարւան տուրքը պահանջել չատճիշտ կրլար, բայց քանի որ ժողովը այդ յօդուածը ջնջեց, այս յետեւալ տուրքերու վճարման խնդիրն ալ պէտք է նկատուի թեան առնէ:

ԺԱԳ. ԷՖ. ՍԱՅԱՊԱՆԱՆ. — Ու եւ է օրէնք մը յետադարձ ժամանակներու չլըրնար պատկանիլ. քանի որ այսօրու ընէ կը սկսի տուրքի գանձումը՝ անկէ առաջի մինչեւ 908 տարւան տուրքի վճարումը չլըրնար պայման դրուիլ, հետեւաբար ես կ'առաջարկեմ որ նոյն տարւան տուրքը նկատողութեան առնուի:

Լ. ՏՆՏԵՍԵԱՆ ԷՖ. — Ես կը կարծեմ որ երեսփոխանական ընտրութեան առթիւ, 1908էն սկսելով կանոնադրապէս իր տուրքը վճարած ըլլալը պայման պէտք է դնել: Եթէ ամէնքը մէկէն վճարելու գիտարուծութիւն կայ, անշուշտ մաս առ մաս կրնայ վճարուիլ, վերջապէս պարտքը այս կերպով վճարողը իրաւունքին տէր կը դառնայ:

Ա. ԷՖ. ԲԱՐՍԵՂԵԱՆ. — Այստեղ նկատելի կէտը այն է որ տուրքերը հետզհետէ պիտի գանձուին, հետեւաբար բնաւ իրաւացի չկրնար ըլլալ երբ բոլոր յետեւալ տուրքերը մէկ անգամէն գանձուած ըլլալու պայման դրուի: Ընտրութեան մասնակցելու համար տուրքէ պարտքին վճարած ըլլալը նոր է . . .

ԱՏՆՆ. ԷՖ. — (Ընդմիջելով) Այդ պայմանը նոր չէ:

Ա. ԲԱՐՍԵՂԵԱՆ ԷՖ. — (Շարունակելով) Օրէնքները պէտք չէ յետադարձ ազդեցութիւն ունենան, հետեւաբար եթէ տուրքի բուծը պիտի պահանջուի, առ առաւելն նոյն տարւոյ տուրքը կրնայ պահանջուիլ:

ԱՏՆՆ. ԷՖ. — Կատարուած գեր ու

ղէմ վիճաբանութենէն խնդիրը բաւական լուսաբանուեցաւ, հետեւաբար անոնք որ յետեւալ տուրքերու վճարումը կուզեն եւ կամ բնթացիկ տարւոյ տուրքին միայն վճարուած ըլլալը պայման կը դնեն իրենց ըուէն թող տան:

(27 ըուէով ընդունուեցաւ որ օրէնքի գործադրութեան թուականէն մինչեւ ընթացիկ տարւոյ տուրքին վճարումը ըլլալը պայման դրուի: Իսկ 1908 տարեկէն սկսեալ, տուրքի վճարման առաջարկը ստացաւ 2 ըուէ):

ՆԱԽԱԳ. Ա. — Ուրեմն անցեալ տարիներու պարտքը կամուտը մնաց, իսկ ընթացիկ տարւանը պարտաւորիչ, ընտրութեան մասնակցելու համար:

Ս. ԷՖ. ԳԱՐՍԵՆԱՆ. — Կէտ մ'ալ ես զիտել առ կուզեմ. եթէ Ազգ. տուրքի բաժինը 10. զրոյ. ըլլալու պարագան տուրքի մասնակցողներու մէջ չքաւոր եղողներու դիւրութիւն մը ընծայելու համար դրուած է, պիտի առաջարկէի որ վարչութեան իրաւասութիւն տրուի, որպէս զի, երբ յետեւալ տարիներու համար այսպիսի վճարում մ'ընելու դիմումներ ըլլան կարենայ ընդունիլ. օրէնքներու մէջ նախըթաց ժամանակներու համար կիրարկելի տրամադրութիւններ կը գտնուին գիւրութիւն մը տալու համար գործադիր իշխանութեան: Կատարելով որ առժամեայ յօդուած մը դրուի այս կ'ստանադրութեան մէջ, այ գիմաստով:

ԱՏՆՆ. ԷՖ. — Եթէ կ'ընդունի ժողովը առժամեայ յօդուած մը կրնանք աւելցնել այս կամատով կանոնադրին վրայ. եւ վաւերացուած կանոնագիրը կը զրկենք վարչութեան, որպէս զի գործադիր, ու Ազգ. տուրքի գանձման ու բաշխման յատուկ հրահանգը պատրաստէ:

Առժամեայ յօդուած. — Այս օրէնքով նախատեսուած 10 զրոյի բաժինը նախըթաց ժամանակներու համար կիրարկելի է վար-

չական տնօրինութեամբ, միայն անկարողներու համար:

Բոլոր օրէնքներու մէջ այսպիսի տրամադրութիւններ կան, եւ եթէ չարութիւն ահադին դժուարութիւններ յառաջ կուգան:

(Ժողովը ընդունելով սոյն առժամեայ յօդուածը առեանը փակուեցաւ ժամը հինգ ու կէսին):

Ասեմագլիր Ասեմագլիտ
Յ. ԷՖ. ՏԻՍԵԱՆԵՆ ՀԱՅԻ ԽՈՃԱՍԱՐԵԱՆ

(Ահաւասիկ տուրքի կանոնագիրը էր վերջնական ձեւին մէջ):

ՅՕԴՈՒԱՅ 1. — Ազգ. Սահմանադրութեան 90 եւ 91 յօդուածներուն տրամադրութեանց համաձայն ազգ. ընդհանուր տուրքը պարտաւորիչ է 21 տարեկանը թեւակոխած եւ ո՛րէն է վաստակի կամ եկամուտի տէր ազգ. անհատներու համար:

ՅՕԴ. 2. — Մայրաքաղաքի մէջ ընդհ. տուրքի նուազագոյն բաժինն է 10 զրոյ: Ամէն ազգային անհատ իր նիւթական կարողութեան համեմատ, կը վճարէ մէկէն մինչեւ յիսուն բաժին:

ՅՕԴ. 3. — Ներկայ օրէնքին գործադրութեան թուականէն սկսեալ տեղի ունենալիք բոլոր երեսփոխանական ընտրութեանց առթիւ անոնք միայն ընտրողի իրաւունք պիտի վայելեն որոնք վճարած են իրենց ազգ. տուրքը. ներկայ օրէնքին քուէրկութեան թուականէն սկսեալ մինչեւ ընթացիկ տարին. ըստ Սահմանադրութեան 65րդ յօդուածին, չվճարողներ թէ՛ ընտրողի իրաւունքէն պիտի զրկուին, եւ թէ՛ իրենց ո՛րէն է ազգ. պաշտօնի կոչուած պարագային, այդ ընտրութիւնը չպիտի վաւերացուի ազգ. իշխանութեան կողմէ, մինչեւ որ այդ պայմանները չըլրացնեն: Պիտի մերժուին նաեւ բոլորայն ազգայիններուն խնդիրներն ու գործառնութիւններն որոնք չեն յարգած այս յօդուածին տրամադրութիւնները:

ՅՕԴ. 4. — Ազգ. տուրքը մէկ անգամով նանխիկ կը վճարուի տարւոյն առաջին եռամսէին մէջ:

ՅՕԴ. 5. — Ազգ. տուրքէ զերծ են ուսանողներն եւ զէնքի տակ գտնուողները:

ՅՕԴ. 6. — Ներկայ կանոնագրին հաստատմէն անմիջապէս վերջ, Կեդր. վարչութեան կարգեալ յատուկ պաշտօնեաներ Պոլսոյ իւրաքանչիւր թաղին մէջ թաղ. խորհրդին աջակցութեամբ եւ մարդահամարի տուժարներն ի ձեռին ունենալով, թաղին բոլոր ազգայնոց կեդրոնական տրոց բաշխումը պիտի կատարեն առանձին ցուցակի վրայ եւ հաղորդեն երեսփոխաններու գրաւորապէս, որպէս զի եթէ ունին դիտողութիւն, ներպէս զի եթէ ունին դիտողութիւն, ներկայացնեն թաղ. խորհուրդին, իրենց հաղորդուած թուականէն մինչեւ մէկ ամիս: Վերոյիշեալ բաշխման ընդհ. ցուցակը եկեղեցւոյ բակին մէջ ի տես ժողովրդեան պիտի դրուի մինչեւ մէկ ամիս: Երբ եղած դիտողութիւնն ընդունելի դատուի, սրբազրութիւնը կը կատարուի: Յետ այնորիկ ցուցակը վերջնական նկատուելով Պատրիարքարան կը զրկուի. որպէս զի ընդհանուր տուժարաց մէջ արձանագրուի:

ՅՕԴ. 7. — Իւրաքանչիւր ազգ. անհատ կ'արձանագրուի այն թաղին տրոց ցուցակին մէջ ուր որ կը բնակի ձմեռն:

ՅՕԴ. 8. — Կեդր. տրոց բաշխման ցուցակները, չորս տարին անգամ մը վերաքննելի են, եւ այս վերաքննութիւնը կը կատարուի 6րդ յօդուածի տրամադրութեան համաձայն: Ըստ այսմ, տուրք վճարողներու ցանկէն կը ջնջուին այդ չորս տարին երեսնու ընթացքին մեռնողները, թաղէն հեռացողները, վաստակէ կամ եկամուտէ զրկուածները, եւ կ'աւելցուին բոլոր անոնք որ 21 տարին նոր թեւակոխած են եւ յօդ. 1ի. համաձայն պարտաւոր են տուրք վճարել, ինչպէս նաեւ բոլոր անոնք որ ետքէն եկած ու թաղին մէջ հաստատուած են:

ՅՕԴ. 9.—Կեդր. տրոց հաւաքումը Պատ-
րիարքարանի կողմէ կարգեալ յատուկ
հաւաքիչներու ձեռօք կը կատարուի իւ-
րաքանչիւր Թաղի մէջ :

ՅՕԴ. 10.— Ներկայ կանոնագրին հա-
մաձայն, ազգային տուրքի գանձման եւ
բաշխման մանրամասնութիւնները կը
ձշգուլին Ազգ. Կեդր. վարչութեան Բաղ.
Ժողովին կողմէ պատրաստելի հրահան-
գով մը:

ՅՕԴ. 11.— Գաւառներու կողմէ Պոլ-
սոյ Կեդր. սնտուկի վճարուած տուրքը
պիտի շարունակուի ըստ առաջնոյն,
մինչեւ որ Ազգ. Ժողովը, համաձայն Ազգ.

Սահմանադրութեան 93րդ յօդուածին,
այդ մասին հարկ եղածը որոշէ:

ՅՕԴ. 12.— Այս օրէնքին գործադրու-
թիւնը յանձնուած է Ազգ. Կեդր. վար-
չութեան Բաղաքական Ժողովին:

ԱՌԺԱՄԵԱՅ ՅՕԴՈՒԱԾ.— Այս օրէն-
քով նախատեսուած 10 ղրշի բաժինը
նախընթաց ժամանակներու համար կի-
րարկելի է վարչական տնօրինութեամբ,
միայն անկարողներու համար:

(Դ. Վիճակ)

- Գում գարու, Գումգարուի դուրս
69. Դաւիթ Էփէնտի Տէր-Մովսէսեան
70. Շամբարձում » Պոյաճեան
71. Սարգիս » Սուխ
72.

Կէտիկ փաշա

73. Շաշեակ Էփէնտի Արամեան
74. Յարութիւն » Ճանկիւլեան
75. Յակոբ » Աւետիսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զարբեան

Սամաթիա Ս. Գէորգ

78. Գրիգոր Էփէնտի Զօհրապ
79. Լեւոն » Սամսեան
80. Շաշիկ » Խօնասարեան
81. Պարգեւ » Փափագեան
82. Լեւոն » Սեդրոսեան
83. Ռուբէն » Փափագեան
84.

(Ե. Վիճակ)

Գումգարու-Տուր-Իմատիէ

85. Երուանդ Էփէնտի Խորասան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկեան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թօլի-գարու

90. Գէորգ Էփէնտի Սիմբեշեան
Ղալաթիա-Պէշքօզ
91. Երուանդ Էփէնտի Օտեան
Նաուլ-գարու
92. Նշան Էփէնտի Գալպեան
93. Տիգրան » Դանուկեան

Սամաթիա Ալմըմէրմէր

94. Պետրոս Էփէնտի Գալֆեան
Սկիւտար Ս. Խաչ
95. Բարսեղ Էփէնտի Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրենկիւլեան
99. Յակոբ » Միասեան

Ռումէլի-հիսար, Պոյաճը-գիւղ, Ենի-գիւղ

100. Արրահամ Էփէնտի Տէր Յակոբեան

ԳԱՒԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԵՐ

(Ա. Վիճակ)

Եգիպտոս

101. Վահան Էփէնտի Թէրեան
Եւդոկիա
102. Յակոբ Էփէնտի Պօնոգեան
Խարբերդ
103. Տօթ. Փաշայեան Էփէնտի
Կարին
104. Սողոմոն Էփէնտի Տէր-Ազարեան
Կիւրլին-Մանճըրթ
105. Արամ Էփէնտի Անգոնեան

Մուշ

106. Գեղամ Էփէնտի Տէր-Կարապետեան
Զմշկածագ-Զարսանճագ

Տրապիզոն

108. Օննիկ Էփէնտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վառմեան Էփէնտի
Բալու
110. Գամէր Էփէնտի Շիրինեան
Եօզլատ
111. Աւետիս Էփէնտի Ճինկիւլեան
Կեսարիա
112. Վահան Էփէնտի Էսաեան
Հալէպ-Այնթապ
113. Սարգիս Էփէնտի Գնաճեան
Նիկոմիդիա

114.

Պաղտատ

115. Տօթ. Ներսէս Էփէնտի Թիւլեան
Սդերդ
116. Սերովբէ Էփէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ակն

117. Ատովմ Էփէնտի Երեցեան
Արարկիր
118. Արթաթի Էփէնտի Սարաֆեան
Եդեսիա
119. Սեպուհ պէյ Ի. Թիւսեան
Զղմուռիա
120. Լեւոն Էփէնտի Տնտեսեան
Հաճըն
121. Տէվլէթ Էփէնտի Տատրեան
Մալաթիա

1 2.

Պանտրմա-Պալքէսիլ

123. Տիրան Էփէնտի Երկանեան
Վան

124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

125

Ատանա

126. Արիստակէս Էփէնտի Գասպարեան
Բաղէշ
127. Աղթեանդր Էփէնտի Փանոսեան
Կուտինա-Աֆիօն-Գարա-հիսար
128. Զարեհ Էփէնտի Խօրասանեան

- Պրուսա
129. Գասպար էֆենտի Նեմցե
Ռոտոսթո
130. Միհրդատ էֆենտի Հայկազն
Տիգրանակերտ
131. Տիգրան էֆենտի Նազաշեան
Տիվրիկ
- 132.

(Ե. Վիճակ)

- Ամասիա—Մարզուան
193. Տիգրան էֆենտի Մարտիկեան
Բարերդ
194. Յարուժին էֆենտի Դարբինեան

- Դաղատիւ
135. Տր. Խաչիկ էֆենտի Պողոսեան
Դոնեա
136. Բարձող էֆենտի Զօրեան
Երզնկա
137. Գարրիէլ էֆենտի Նորատունկեան
Մարաշ—Չէլժուն
138. Սմբատ էֆենտի Բիւրատ
Շապիւր—Գարահիսար
139. Ժագ էֆենտի Սայապոլեան
Սերաստիա
140. Տօրթ. Նազարէթ էֆենտի Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- | | |
|-----------------------------------|----------------------------------|
| Դարբիէլ էֆ. Նորատունկեան Ա. Ատեն. | Յակոբ էֆենտի Աւետիսեան Ա. Ատեղւ. |
| Հայկ « Խօճասարեան Բ. « | Արամ « Անտոնեան Բ. « |
| Համբարձում էֆ. Պոյաճեան Գ. « | Դէորդ « Սիմքէշեան Գ. « |

ԶԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Տ. Հմայեակ Արքե. Դիմաքսեան Ատենա.
Ներսէս էֆենտի Օհանեան
Տոք. Ստեփան « Թէրզեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Հմայեակ էֆենտի Արամեանց
Մարկոս « Նաթանեան
Աստուածատուր էֆենտի Խաչատրեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Արիստակէս էֆենտի Գասպարեան
Եղուարդ « Շիրինեան
Տիգրան « Մանուէլեան

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

- Դէորդ էֆենտի Ասլանեան Ատենապետ
Յովհաննէս « Իսագուլեան
Սողոմոն « Տ. Ազարեան

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Պարգէլ էֆենտի Փափազեան
Յարուժին « Մոստիշեան
Տրադատ պէյ Տատեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Աղէքսանդր էֆենտի Փանոսեան Ատեն.
Ռուբէն « Զարդարեան
Օննիկ « Զիֆթէսարաֆ

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Տ. Վահրամ Արքեպիս. Մանկունի Ատեն.
Յակոբ էֆենտի Մինասեան
Տոք. Տէվէթ « Տատրեան

ՆԱԽԱԶԵՌՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Դաւիթ էֆենտի Տ. Մովսէսեան Ատեն.
Պետրոս « Խորասանեան
Ռուբէն « Փափազեան

ԵԼԵԻՄՏԻՅ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

- Թորգոմ էֆենտի Պոյաճեան Ատենա.
Միհրդատ « Հայկազն Մատակա.
Յարուժին « Հանկիւլեան
Յարուժին « Դարբինեան Ատեղւ.
Սարգիս « Պէհրէեան Դանձապ.

Գ Ի Ն 1 Ղ Ր Ո Ւ Շ

Սեփականութիւն Ազգ. Անտիկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յասկացեալ
Կը ծախուի յազգային Խորհրդարան Ղալաթիոյ